**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

29 օգոստոսի 2023 թվական թիվ 126-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-119-0031-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԺՈՐԺԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 և 39-րդ կետերի դրույթներով ինչպես նաև հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի գյուղի բնակիչ՝ Գևորգ Ժոժիկի Հակոբյանը 2023 թվականի օգոտոսի 17-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 312,75 քառակուսի մետր արտաքին մակերեսով ասնաշենքը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-119-0031-0004 կադաստրային ծածկագրով 0,09213 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված, ինքնակամ կառուցված և օրինական ճանաչված 312,75 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-119-0031-0004 կադաստրային ծածկագրով, 0,09213 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական

օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Քեթի 1-ին փողոց, 5-րդ նրբանցք 6/1 անասնաշենքը, իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 24052023-08-0038) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով՝ 651034 (վեց հարյուր հիսունմեկ հազար երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, որից՝ 464747 (չորս հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր քառասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամը շինության արժեքն է, իսկ 186287 (մեկ հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի Գևորգ Ժորժիկի Հակոբյանին (նույնականացման քարտ 001423805 տրված 2014 թվականի հունվարի 29-ին, 030-ի կողմից, բնակվող Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Քեթի, 3-րդ փողոց, տուն 21):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝

1) Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Ժորժիկի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Է. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Հ. ՆԱՎՈՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

29 օգոստոսի 2023 թվական
գյուղ Ախուրյան